

ՈՀԱՍՏԱՏՎԱԾ ԷՈ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական
խորհրդի 01.06.2017թ. թիվ 5 նիստում:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի նախագահ,
ոստիկանության գեներալ-լեյտենանտ

ՀՈՎՀ. ՎԱՐՅԱՆ

«_____» _____ 2017թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ
ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
2017 -2021 ԹԹ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի (այսուհետ՝ Կրթահամալիր) միջազգայնացումը նախատեսում է կրթական ծրագրերի իրականացման և գիտահետազոտական գործընթացներում միջազգային և միջմշակութային ուղղվածության ապահովում: Միջազգայնացման զարգացման համար խթան են հանդիսացել միջազգային և ազգային մակարդակներում իրականացվող մի շարք գործընթացներ և բարեփոխումներ:

Միջազգային համատեքստ. Բոլոնիայի գործընթացը (1998թ.) սկիզբ դրեց բարձրագույն կրթության համակարգի համաեվրոպական բարեփոխումներին: Բարեփոխումները մի շարք եվրոպական երկրներում միտված էին համակարգի բարելավմանը, իսկ որոշ երկրներում՝ հատկապես հետխորհրդային՝ վերակառուցմանը: Այս գործընթացը և գլոբալիզացիան առաջ բերեցին մասնագիտական ուսումնական հաստատությունների միջազգայնացմանը նպաստող հանգամանքներ:

Ստեղծվեցին համապատասխան նախադրյալներ ուսումնական հաստատություններին հանդես գալու միջազգայնացման խնդիրների վերհանման և լուծման ծրագրերով, եվրոպական մակարդակում համադրելի կրթական ծառայությունների առաջարկով, հետազոտության որակի բարձրացմամբ և նորարարությունների ներդրմամբ: 2009թ. կրթության ոլորտի համար պատասխանատու եվրոպական նախարարների «Լյովեն և Լյովեն-լա-Նյուվո» կոմյունիկեով հաստատվեցին մինչև 2020թ. Բոլոնիայի գործընթացի գործողությունների հիմնական ուղղությունները, որոնք միտված էին ապահովելու կայուն զարգացում, շարունակական միջազգայնացում և գլոբալ համագործակցություն, կոչված են խթանելու ուսանողների, հետազոտողների և անձնակազմի շարժունությունը՝ կրթական ծրագրերի և հետազոտությունների որակը բարձրացնելու, անհատի զարգացման, միջմշակութային հաղորդակցության համար: Հարկ է նշել, որ 2016թ. տեղի ունեցավ նաև եվրոպական նախարարների Երևանի կոմյունիկեն, որտեղ շարունակվեց վերոհիշյալ քաղաքականությունը: Վերոնշյալ կոմյունիկեններով Բոլոնիայի

գործընթացին միացած երկրների կրթության ոլորտի համար պատասխանատու նախարարները պարտավորվեցին մինչև 2020թ. բարձրագույն կրթության եվրոպական տարածքի շրջանավարտների նվազագույնը 20 տոկոսի համար ապահովել արտասահմանում դասընթացների կամ վերապատրաստման անցկացումը:

Ազգային համատեքստ. Հայաստանի Հանրապետությունը, միանալով Բոլոնիայի գործընթացին (2005թ.), նոր երանգ տվեց ՀՀ բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումներին: Կրթական համակարգերի համադրելիության, ուսանողների և դասախոսական կազմի շարժունության, միջմշակութային երկխոսության ապահովման հարցը դարձել է բոլոր մասնագիտական ուսումնական հաստատությունների (ՄՈՒՀ-երի) կարևորագույն խնդիրներից մեկը: ՀՀ-ում այդ ուղղությամբ մեծածավալ աշխատանք են կատարում գրեթե բոլոր ՄՈՒՀ-երը, որոնք տարբեր ծրագրերի միջոցով ՀՀ-ում ուսումնառության են հրավիրում օտարերկրյա սովորողների: ՀՀ կրթության զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագիրը սահմանում է միջազգային և տարածաշրջանային համագործակցությունը և հայապահպանությունը որպես Հայաստանի կրթության զարգացման պետական քաղաքականության սկզբունք: Համակարգված միջազգային ներգրավվածությունը կարևորվում է նաև Կրթահամալիրի ռազմավարական խնդիրների լուծման համատեքստում:

Այսօր միջազգային համագործակցությունը դարձել է հիմնասյուն՝ գաղափարների փոխանակման, նոր գիտելիքների ձեռքբերման, բարձրորակ կրթության տրամադրման և հետազոտությունների իրականացման համար: Կրթահամալիրի ռազմավարական խնդիրների լուծման համար այն առավելապես կարևորվում է իր առանձնահատկություններից բխող իրողությամբ: Մասնավորապես՝ Կրթահամալիրը նպատակ ունի ինտեգրվել միջազգային կրթական տարածքին և այդ պահանջին համապատասխան մասնագետներ պատրաստել ՀՀ-ում:

ՀՀ-ում Կրթահամալիրը ունի բացառիկ առաքելություն. միայն այստեղ է տրամադրվում ուստիկանական մասնագիտական կրթություն և ՀՀ ուստիկանության տարբեր ստորաբաժանումների համար պատրաստվում որակյալ մասնագետներ: Այս առումով Կրթահամալիրում շեշտը դրվում է մասնագիտական ուսուցման և օտար

լեզվի իմացության մակարդակի բարձրացման վրա, ինչն առաջնային նշանակություն ունի միջազգային համագործակցության զարգացմանը նպաստելու առումով:

Ընդհանուր առմամբ վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ օտարերկրյա ուսանողների քանակը 2005-2010թթ. ժամանակահատվածում նվազել է մոտ 40%-ով:

ՀՀ բուհերում օտարերկրյա սովորողների փոքրաքանակության պատճառները տարբեր են և պայմանավորված են անբավարար մարքեթինգային միջոցառումներով, ֆինանսավորման ոչ ճկուն և անբավարար մեխանիզմներով, ուսուցման ճկուն և այլընտրանքային ուղիների բացակայությամբ: Հաշվի առնելով տարածաշրջանային առանձնահատկությունները և մասնագիտական կրթական համակարգի զարգացման համանման ուղիները՝ ծրագրերը պետք է ուղղված լինեն մասնավորապես ԵԱՏՄ երկրներից ուսանողներ ներգրավելուն:

Կրթահամալիրի կողմից որպես շահագրգիռ առաջարկ կարող է լինել բարձրորակ իրավաբանական կրթության տրամադրումը, որը ֆինանսական առումով համեմատաբար մաշելի է ոչ միայն արտասահմանյան համանման, այլ նաև՝ ՀՀ ՄՈՒՀ-երի հետ համեմատ:

Արտասահմանյան հատկապես հետխորհրդային տարածաշրջանի երկրներից ՀՀ-ում սովորելու համար թիրախային խմբի ընտրությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝

- համանման սոցիալ-մշակութային և պատմական անցյալ, փոխադարձ հաղորդակցման և ըմբռնման հնարավորություն տվող (ռուսերեն) լեզվի կիրառելիություն,

- ընդհանուր կրթական տարածաշրջանի առկայություն,

- տարածաշրջանային համանման սոցիալ-քաղաքական զարգացումները:

Հայաստանյան ուսանողները արտասահման են մեկնում մասնագիտական կրթական համակարգում սովորելու հիմնականում հետևյալ ծրագրերի շրջանակներում՝ Ռուսաստանի Դաշնության կողմից ֆինանսավորվող Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի (PLIHK) կողմից իրականացվող կրթական ծրագրերով, Եվրամիության կողմից ֆինանսավորվող Erasmus, Ամերիկյան

պետդեպարտամենտի կողմից ֆինանսավորվող Muskie, Գերմանիայի Դաշնության կողմից ֆինանսավորվող DAAD և KAAD, Նիդերլանդների կողմից ֆինանսավորվող ծրագրերի և միջպետական ու միջբուհական պայմանագրերի շրջանակներում:

Ներկայումս Կրթահամալիրը համագործակցում է մի շարք ԱՊՀ, ԵԱՀԿ և եվրոպական ոստիկանական (ՆԳՆ) ուսումնական հաստատությունների հետ: Սակայն պայմանագրերի շրջանակներում հիմնականում իրականացվում են միայն համատեղ հոդվածների տպագրություն, դասախոսական փորձառության փոխանակում: Կրթահամալիրը 2016-2017թթ.-ից սկսել է սովորողների շարժունության խրախուսման նոր քաղաքականություն և ապահովել մի շարք սովորողների կարճատև ճանաչողական այցեր արտասահմանյան համապատասխան ուսումնական հաստատություններ (Վրաստանի ՆԳՆ ակադեմիա):

Հիմնական խոչընդոտները արտասահմանում սովորելու համար հանդիսանում են ուսանողների ոչ բավարար տեղեկացվածությունը, լեզվական խնդիրները, որոշակի հմտությունների բացակայությունը, անբավարար ֆինանսավորման աղբյուրները և այլն:

Սույն փաստաթուղթը սահմանում է Կրթահամալիրի գործունեության միջազգայնացման վերաբերյալ ընդհանուր տեսլականը, նպատակները, խնդիրները և դրանց իրականացմանն ուղղված հիմնական գործողությունները՝ Կրթահամալիրի գործունեության միջազգայնացման վերաբերյալ: Այն բխում է Կրթահամալիրի ռազմավարությունից (հայեցակարգ և զարգացման ծրագիր) (այսուհետ՝ ռազմավարություն): 2017-2021թթ. Կրթահամալիրի միջազգայնացման քաղաքականությունը և ռազմավարությունը ենթադրում է Կրթահամալիրի գործունեության բոլոր բնագավառներում միջազգային ուղղվածության ապահովում, միջազգային համագործակցության խթանում, սովորողների և դասախոսների համար բազմամշակութային միջավայրի և սովորողներին սատարող կրթական ծառայությունների ապահովում:

Կրթահամալիրի միջազգայնացման հիմնական և կարևորագույն նպատակն է բարելավել կրթական ծառայությունների և հետազոտությունների որակը, գործող

կրթական ծրագրերը, մրցունակությունը ազգային և միջազգային մակարդակներում, ստեղծել միջմշակութային երկխոսության նպաստավոր միջավայր և ապահովել շրջանավարտների պահանջարկվածությունը, մրցունակությունը ազգային և միջազգային մակարդակներում:

Ըստ Կրթահամալիրի ռազմավարության՝ **հաստատության հեռանկարներից է** միջազգայնացման և մրցակցության ապահովման առաջնահերթությունը, միջազգային ճանաչման և հեղինակության բարձրացումը: Ռազմավարական խնդիրների լուծմամբ մի շարք համագործակից երկրներում Կրթահամալիրը ճանաչելի կդառնա՝ որպես ուստիկանական կադրերի (իրավաբանների) պատրաստման առաջատար ՄՈՒՀ:

**ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՅՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հիմք ընդունելով իր ռազմավարական ուղղությունները և մասնավորապես Կրթահամալիրի կառավարման համակարգի օպտիմալացումը, կրթական գործունեության արդիականացումը, գիտական և նորարարական գործունեության զարգացումը, մտավոր գործունեության արդյունքների փոխանցումը և առաջանցիկ կրթական պրակտիկաների տարածումը, կադրային ներուժի և սոցիալական համագործակցության զարգացումը՝ հետագա հինգ տարիների ընթացքում Կրթահամալիրը իր միջազգայնացման ռազմավարությունը կիրականացնի հետևյալ հիմնական ուղղություններով՝

1. կրթական ծրագրերում միջազգային ուղղվածության ապահովում,
2. ճանաչողական այցերի կազմակերպում՝ օտարերկրյա, մասնավորապես սփյուռքահայ քաղաքացիների համար,
3. Կրթահամալիրի անձնակազմի և սովորողների շարժունության ապահովում,
4. հետազոտությունների միջազգայնացում,
5. ազգային և միջազգային մակարդակներում համագործակցային ցանցերին անդամակցում,

6. միջազգայնացման կառավարման գործընթացի բարելավում:

Ռազմավարական ծրագրի իրականացման նպատակները և խնդիրներն են՝

Նպատակ 1. Բարելավել Կրթահամալիրի կրթական ծառայությունների և հետազոտությունների որակը

Խնդիր 1.1. Կրթական ծրագրերում միջազգային ուղղվածության ապահովում

1.1.1. Ստեղծել համապատասխան միջազգային միջավայր հրավիրված մասնագետների, փորձագետների կողմից դասախոսությունների անցկացման, ինչպես նաև գիտաժողովների, սեմինարների, աշխատանքային հանդիպումների կազմակերպման միջոցով:

1.1.2. Պատրաստել մասնագիտական կրթական ծրագրեր ռուսերենով և անգլերենով և առաջարկել համապատասխան թիրախային խմբերին:

1.1.3. Ստեղծել օտարերկրյա ուսանողների համար խորհրդատվական հարթակ:

1.1.4. Մշակել եվրոպական և ԱՊՀ երկրների ոստիկանական ուսումնական հաստատությունների հետ համատեղ ծրագրեր՝ կրկնակի աստիճանաշնորհման հնարավորություններով:

1.1.5. Մշակել օտարերկրյա ուսանողներին վերաբերող համապատասխան ընթացակարգեր:

Խնդիր 1.2. Հետազոտությունների միջազգայնացում

1.2.1. Հավաքագրել և Կրթահամալիրի կառուցվածքային ստորաբաժանումների միջև տարածել գործող կրթական ծրագրերի, գիտական կոնֆերանսների, գիտական հոդվածների հրատարակումների հնարավորությունների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն:

1.2.2. Կազմակերպել տեղեկատվական սեմինարներ՝ միջազգային հետազոտական ծրագրերում ներգրավման, միջազգային պարբերականներում հոդվածների տպագրության վերաբերյալ:

1.2.3. Կազմակերպել հետազոտական աշխատանքներ՝ ԱՊՀ, ԵԱՏՄ երկրների ոստիկանական ուսումնական հաստատությունների հետ գործող համագործակցային

պայմանագրերի շրջանակներում՝ տարածաշրջանային, միջմշակութային և համատեղ հետաքրքրություններ կայացնող խնդիրները վերհանելու, ուսումնասիրելու և արդյունքները գործնականում կիրառելու նպատակով:

1.2.4. Աջակցել միջազգային հետազոտությունների արդյունքների հրապարակման գործընթացին միջազգայնորեն ճանաչված պարբերականներում (Scopus, РИНЦ):

Նպատակ 2. Սովորողների և դասախոսների շարժունության բարելավում, միջմշակութային փոխշփման նպաստավոր միջավայրի ստեղծում

Խնդիր 2.1. Պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ անձնակազմի և սովորողների շարժունության ապահովում

2.1.1. Վերհանել միջազգային ասպարեզում տեղի ունեցող կրթական գործընթացների հիմնական միտումները, արդիական թեմաները, Կրթահամալիրի ուժեղ կողմերը և ստեղծել համապատասխան ծրագրեր օտարերկրյա՝ մասնավորապես սփյուռքահայ սովորողներին ներգրավելու նպատակով:

2.1.2. Համապատասխան մարքեթինգային ուսումնասիրությունների հիման վրա մշակել միջոցառումներ նոր ծրագրերը խթանելու և թիրախային խմբին հասցնելու նպատակով:

2.1.3. Օտարերկրյա սովորողներին տրամադրվող կրթական ծրագրերի հետ համատեղ մշակել ամբողջական փաթեթներ նրանց կացության, ուսման վարձի, ՀՀ-ում ժամանակավոր կացություն ստանալու համար, աջակցության և այլ ծառայություններ տրամադրելու համար:

2.1.4. Ստեղծել տեղեկատվական էլեկտրոնային ցանց՝ Կրթահամալիրի օտարերկրյա սովորողների հետ մշտական կապ պահպանելու նպատակով:

2.1.5. Պարբերաբար կազմակերպել տեղեկատվական սեմինարներ՝ Կրթահամալիրի սովորողներին միջազգայնացման խնդիրների, գործող փոխանակման ծրագրերի մասին լուսաբանելու նպատակով:

2.1.6. Կազմակերպել վարչակազմի, պրոֆեսորադասախոսական, ուսումնական գործընթացի կազմակերպման մեջ ներգրավված և ուսումնաօժանդակ անձնակազմի համար օտար լեզուների իմացության դասընթացներ:

Նպատակ 3. Կրթահամալիրի արտաքին կապերի ընդլայնում

Խնդիր 3.1. Համագործակցային ցանցերի ստեղծում՝ թե՛ ազգային, և թե՛ միջազգային մակարդակներում

3.1.1. Ստեղծել համագործակցային սերտ կապեր ազգային մակարդակում գործող միջազգային կազմակերպությունների հետ:

3.1.2. Ավելացնել այլ աղբյուրներից ֆինանսավորվող միջազգային համատեղ ծրագրերը:

3.1.3. Նպաստել միջազգային ոստիկանական ուսումնական հաստատությունների ասոցիացիաներին (միություններին) անդամակցելուն և նրանց հետ համագործակցությունն ընդլայնելուն:

3.1.4. Մշակել միջազգային համագործակցային ծրագրերի արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տարածման ճկուն և հանրամատչելի ուղիներ:

Նպատակ 4. Միջազգայնացման ռազմավարության իրագործման, մշտադիտարկման և միջազգայնացման գործընթացների բարելավում

Խնդիր 4.1. Աջակցություն Կրթահամալիրի անձնակազմին միջազգայնացման խնդիրների լուծմանը մասնակից դարձնելու հարցերում

4.1.1 Ներգրավել համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներին միջազգային համագործակցային ծրագրերում՝ ըստ մասնագիտական փորձի և համապատասխան հմտությունների առկայության:

4.1.2. Կազմակերպել ամենամյա խորհրդատվական հանդիպումներ, տեղեկատվական սեմինարներ միջազգայնացման գործընթացում ներգրավված անձանց մասնակցությամբ:

Խնդիր 4.2. Միջազգայնացման կառավարման գործընթացի բարելավում

4.2.1. Ամփոփել միջազգայնացման տարեկան գործունեության արդյունքները և նախատեսել հաջորդ տարվա միջազգային զարգացման ուղիները:

4.2.2. Կազմակերպել քննարկումներ Կրթահամալիրի կառուցվածքային ստորաբաժանումների համապատասխան ներկայացուցիչների հետ՝ միջազգայնացման ռազմավարության ներդրման հետ կապված խնդիրների վերհանման և լուծման ուղիների որոնման վերաբերյալ: